

նիցն է մեզ համար բղիում: Դու կամենում ես, ո՞վ Աստուծո՞ւ մարդկային տղգի կատարելութիւնը, միաբանութիւնն ու խաղաղութիւնը: Այդ նպատակն ունին Քո մեծ տնօրէնութիւններն երկրագնդիս ընտկիչների կեանքումն եղած իրողութիւնների մէջ: Երանի թէ մենք այս Քո յայտնութիւններդ հասկանայինք, բայց աւա՜ղ, շատ անգամ չենք հասկանում: Եւ մեր միմեանց չընդունելն իբրեւ միեւնոյն մարմնոյ անդամներ, և միշտ աշխատելն, որ մեր ինքնասիրութիւնն ու մեր կրքերն իրանց զոհերն ունենան՝ ազգերի քաշածների միտի աղբիւրն է:

Այսուհետեւ հեռու լինի ինձանից տրտնջելը. Քո ինձ համար արած կարգաւորութիւնից. հեռու լինի ամեն մի կասկած, որ օգտակար են Քո տնօրէնութիւններդ ազգերի ունեցած վիճակների համար, որ ուղղուին: Մեր մեղքի մէջն է մեր դատաւարութիւնն, մեր առաքինութեան մէջն է մեր ոյժն ու մեծութիւնն: Առաջնորդի՛ր մեզ, ո՞վ Տէր, Քո անքննելի խորհրդովդ և վերջապէս ընդունի՛ր մեզ իբրեւ ոչ բոլորովին Քո անարժան զաւակներդ:

Գ. Ե. Ա.

ՓՈՔՐ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

«Որ ի փորոն հաւատարիմ է, եւ ի բաղմին հաւատարիմ է» . (Ղուկ. ԺԶ. 10):

Երբ մենք, ուշի ուշով, մոիկ ենք տալիս Աստուծոյ գործոց վրայ՝ դրանք մեզ երեւում են միշտ երկու, միաջալի զարմանալի, տեսակով—անհուն մեծութիւն և անհուն փառքութիւն:—Մի կողմից՝ տիեզերքի անեղր և անսահման տարածութիւն, որ ոչ մի թուանշանով կարելի չէ արտայայտել և որոյ հանգէպ՝ ամենալառ երեւակայութիւնն անգամ շշմլում է. և անվախճան դարեր, որոնք յաւիտեանս ժամանակաց փոխանակում են միմեանց, Իսկ միւս կողմից՝ կեանքի ոչ նուազ զարմանալի երեւոյթ—կեանքի, որ իւր բոլոր հրաշքներով, բացվում է մեր

աչաց հազիւ հազ նկատելի կերպով, կազմակերպութեան, շինութեան լի ու լի կատարելութիւն այնպիսի կենդանեաց, որոնք բազմութեամբ գտնվում են մի կաթիլ քրի մէջ: Այսպէս, ահա մեզ զարմացնում, տիշեցնում է Աստուծոյ գործոց անհուն մեծութիւնն և անհուն փոքրութիւնը:

Իսկ եթէ մենք մեր հայեացքը մարդկութեան վրայ շուտ տանք, այն ժամանակ մեզ՝ քրիստոնէիցս (որ մարդու ստեղծումն ու զարգացումն Աստուծային գործ ենք գտնում) մի և նոյն զարմանալի բանն է երեւում: Արկղից՝ մենք տեսնում ենք մեծամեծ, զարհուրելի գործեր, որոյմով Աստուծոյ մարդկութիւնը տանում է Իւր ճանապարհներով՝ ազգերից մի քանիսին միւսների վրայ պատուհաս կարգելով, և միլիոնաւոր կեանքեր՝ պատերազմներով, մրրիկներով և տարափոխիկ հիւսնաբանութիւններով նուազեցնելով, սպառելով: Իսկ միւս կողմից՝ մենք ընդունում ենք այն հայրական Նախախնամութիւնը, որ Իւր արարածներից ամենափոքրին անգամ զանց չէ՝ առնում, որ ամեն մի վշտի և արտասուքի փոխարէնը հատուցացնում է և որոյ համար ոչինչ փոքր և աննշան բան չկայ աշխարհում: Այսպէս ուրեմն՝ ինչպէս փոքր, նոյնպէս և մեծ բաներում՝ մենք ընդունում և յարգում ենք Աստուծային իմաստութիւնը և Նրա կանխորոշմանց հանդէպ ի ծունր խոնարհում:

Այս բարձրութիւններից այժմ ցած գանք և Աստուծոյ գործերիցը դէպ ի մարդկանց գործերը դառնանք:

Մեր ներկայ գոյութեան մէջ, եղբայր, մենք ևս երկու տեսակ գործունէութիւն ունինք. — մենք ունինք մեծ պարտականութիւններ, ունինք և փոքր պարտականութիւններ:

Մեծ պարտականութիւնները մեզ համար աղներե են. ամէն ինչ անդադար հրաւիրում է մեզ դէպ ի այդ պարտականութիւնները, որոց մենք, առանց խղճահարութեան, չենք կարող արհամարհել, ոտնակոխ անել: Բայց իմ այսօրուայ զրուցաորութիւնը՝ այդ մեծ պարտականութիւնները չեն: Այսօր ես ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ փոքր պարտաւորութիւններում մեր ունենալիք հաւատարմութեան վրայ, ուստի և

խօսում եմ՝ փոքր պարտականութեանց մասին:

Բայց իմ խօսքի հէնց սկզբումը՝ ես մի խոչընդոտի եմ հանդիպում, որից պէտք է նախապէս զգուշացնեմ ձեզ: Նախ և առաջ՝ ընդունելով, համաձայն Ս. գրոց՝ փոքր պարտականութեանց մեծ նշանակութիւնը՝ ես չեմ ուզում ասել, որ ձեր բոլոր ուշ ու միտքը հէնց մի միայն այդ պարտականութիւններով կլանուի: Բայ, այդպէս մի միայն կարճամիտ մարդիկը կարող են ասել: Այդ կարգի մարդկանց այդ տեսակ վարմունքը տեսանելով՝ պէտք է ասել, որ դրանց համար մի միայն փոքր պարտականութիւններ են յարգի, ուստի և նախապատուութիւնը միշտ նրանց են տալիս: Ամէն մի չնչին բան նրանց աչքում մի մեծ գործ է թուում, ամէն խոչընդոտ — մի լեռ և ամեն մի հոգս՝ մի ծանր բեռ:

Այսպիսով այդ կարգը մարդկանց կեանքումը՝ միշտ մի տեսակ ինչ որ գործունէութիւն կայ, մի տեսակ անհանգստութիւն, որ նրանց հոգւոյ խաղաղութիւնն ու անդորրութիւնը խլում է միշտ: Այս կարգի մարդկանց, եղբարք, միշտ պէտք է յիշեցնել, որ փոքր բաները պէտք է լայն մտքով ընդունել և գործադրել, որ փոքր բաները մեծամեծ պգացմունքներից պէտք է առաջ դան, որ նրանք պէտք է մի մեծ նպատակի ձգտին՝ ճիշդ այնպէս, ինչպէս որ ալիքների վրայ տատանուող նաւակը ղեկավարի ուժեղ ձեռքերի տակ՝ դէպ ի նաւահանգիստն է դիմում: Պէտք է, որ առօրեայ պարտականութիւններն արգելք չինին մեզ կեանքի բուն էութիւնը տեսնելու: Պէտք չէ, որ (ինչպէս Ս. գիրքը պատմում է) Մարթան այլ և այլ հոգսերով զբաղուած գոյով՝ արգելէ Մարիամին — կենցաղային հոգսերից հրաժարուած և հեղ Մարիամին — նստիլ առ ոտս Փրկչին:

Երկրորդ՝ լուս ուշ դարձրէք, որ երբ ես փոքր պարտականութիւնները ընդունում եմ, դրանով չեմ ուզում ասել, որ դրանց պէտք է մեծ պարտականութիւններից գերադասել: Զգուշացէք այդ բանից, որովհետեւ և փարիսեցութիւնը դրանից է ծագում: Երբ հոգին մոռանում է իւր իսկական նպատակն, որ է ծառայել Աստուծոյ, սիրոյ և ճշմարտութեան, այն Ժամանակ աննշան առարկաներն անգամ նրա համար սր-

բազմամեծում են, նրան անհանգստացնում են, և սրբան այդ առարկաներն աննշան լինին, նա այնքան աւելի ուժով և մոլեռանդութեամբ կպչում է նորանց: Մտաբերեցէք Աւետարանում յիշուած գպիրներին, որոնք թղթ-լէշէն քան իսկ ուղղելն իշխում էին: Երեսօր աստուծոյն էին անասալը, աստիւնը, լամանը, իսկ ծանր ծանր օրէնքները — Դատարան, Կորնթուսի և Կապադոքիանի (Մատթ. ԻԳ. 24), որոնք հաշիւում էին շարափ օրերում անելիք քայլերն և այլն և այլն: Այժմ սովորութիւնները փոխուած են թէև, բայց մի և նոյն գաղափարները կան և դեռ քշխում են:

Յաւալի մտութիւն: Այս ճանապարհով ընթացող բոլոր մարդկանց պէտք է միշտ յիշեցնել, որ մեզ ներքին չէ Աստուծային կարգը խռնգարել, որ կեանքում որոշ գծագրուած, անհրաժեշտ և անխուսափելի պարտականութիւններ կան, որոց պէտք է ենթարկուի, ըստ կամաց Աստուծոյ, ամեն բան, որպէս զի այդ պարտականութիւնները բարոյական այն մեծ շարժառիթները դառնան, որոց վրայ հանգչում են բոլոր պատուիրանները իրանց մանրամասնութիւններով նման այն աղբիւրներին, որոնք կարում են հովիտը և որոնք, իրանցից ճահիճներ չկազմելու համար, պէտք է անցնին գնան մինչև գետը՝ համեմատ իրանց ուղղութեան և ընթացքի: Առանց այս ընդհանուր ուղղութեան՝ բարեպաշտութիւնը ծուռ ճանապարհի մէջ կրնկնի և բարոյական կեանքից զատուելով ծիծաղելի և մեղսական աւելորդազտութիւն կդառնայ:

Բայց փոքր պարտականութեանց մէջ ընկղմելու վտանգը՝ մենակ կարճամիտ մարդկանց չէ սպառնում: Յաճախակի այդ վտանգին ենթարկւում են նաև բարձր և անկեղծ բնավորութիւնք, որոց խիղճը շատ զգայուն է լինում: Դուք չէ՞ք տեսել երբ և իցէ այնպիսի մարդիկ, որոնք սաստիկ հետամուտ են փրկութիւնը գտնելու, որոնք միշտ սարսափում են, որ իրանք պէտք եղածին չափ, ըմբռնած չեն Աստուծոյ կամքը: Անհանգիստ, երկիւղած, երերուն՝ այդ մարդիկը չեն վստահանում մի քայլ անգամ առնել, առանց ծանր ու բարակ խորհրդածութեանց բերաններիցը մի բառ անգամ հանել. մի կողմից

իրանց անցեալի ճնշող յիշատակութեան՝ իսկ միւս կողմից իրանց ապագայի վտանգաւորութեան մէջ խորատուղուած այդ մարդիկը կորցրել են և վստահութիւն, և ուրախութիւն ու անգործութիւն: Այս մոլորութիւնը հոգւոյ ժրութիւնն ու շորթունութիւնը խլում է, գործունեայ սիրոյ ձգտումը խեղդում է և մարդուն դէպ ի սորկական երկիւղածութիւն տառնում: Այդպիսի մարդկանց պէտք է յիշեցնել, որ Տէր Աստուածը, իւր ծառայութեան համար, ստրուկներ չէ ուղում, այլ որդիք՝ և նրանցից պահանջում է որդիական վստահութիւն և ուրախութիւն: Իրանց պէտք է ասել, որ Աւետարանը ուրախութիւն և խաղաղութիւն է աւետում, որովհետեւ ուրախութիւնը՝ հոգին ջեւուցանող և սրբացնող մի սլո՛ք է: Այսպիսի մարդկանց կարճատես աչքերի առաջ պէտք է դնել այն Աստուածային անսահման սէրը, որ պարզ կերպով գրուեցաւ Գողգոթայի խաչի վրայ:

Ահա՛, եղբայրք, ես ձեզ ցոյց տուի իմ խօսքի հանդէպ եղած խաչընդոտը, ցոյց տուի և հեռացրի այն ամենը, ինչ որ կարող էր մեր ճանապարհը դժուարացնել: Այժմ՝ ես դառնում եմ ուղիակի իմ բնաբանին, եւ պռաջինը, ինչ որ ինձ զարմացնում է, — դա՛ Աւետարանի մեկ ցոյց տուած՝ փոքր պարտականութեանց մեծ նշանակութիւն և յարգ ունենալն է: Եւ ճշմարիտ՝ աւելի մօտ նայեցէք դուք այդ փոքր բաների, փոքր բարեգործութիւնների, փոքր զոհողութիւնների, փոքր պարտականութիւնների վրայ, — մի խօսքով այն ամէն փոքր բաների վրայ, որ թէ՛ մի ամբողջ հասարակութեան և թէ՛ իւրաքանչիւր անհատական անձի բարոյական կեանքի հիմքն են կազմում: Երբ և իցէ մոպծե՞լ էք, որ մարդս իւր այս կամ այն կոյման մէջ որքան և իցէ նշանաւոր արդիւնքի կամ հետեւանքի հասնելու համար՝ որքան զոհողութիւններ և ինքնուրացութիւն պէտք է յանձն առնէ գրեթէ ամենայն օր: Թէ՛ նա՛ որքան պէտք է աշխատի, որպէս զի բարին չյաղթուի չարից այն մշտական պատերազմում, որ նրանց (բարւոյ և չարի) մէջ լինում է աշխարհիս օտեղծմանիցը ի վեր:

Մի պատերազմի պատմութիւնը կարդալով՝ յաճախ դուք

տեսնում էք միմիայն հերոսական այն ճարտար և խմբովին յարձակումը, որ վճռական թուլեում, յաջողութիւն է առաջացրել, բայց դուք մոռանում էք այն իմաստուն հաշիւները, այն դանդաղ և բարդ աշխատանքը, բազմաթիւ նախազգուշութիւնները, անակնունելի խոչընդոտները, որոնք նոյն վճռական քայլը յառաջացրին և որոցմով զօրապետի կարգադրութեան տակ դրուեցան վարժուած, ժիր և ինչպէս հարկն է զինուորուած, մի զօրաբանակ:

Այժմ հրեակայեցէք, որ այս աննշան մտերամասնութիւններից մէկը կամ միւսը ուշագրութեան տունուած չլինէր, այս կամ այն հրամանը դրուած չլինէր, կամ ժամանակին կատարուած չլինէր, այս կամ այն պահապան զինուորը, ի կորուստ իւր անձին, վտանգի նշան, — թմբկահարութիւն — տուած չլինէր — այն ժամանակ, ո՞ր գիտէ, կարելի է որ յաղթութիւնը պարտութեան փոխարինուէր, Այս համեմատութիւնը, եղբարք, քրիստոնէի կեանքի ճշգրիտ պատկերն է:

Թէ կուզ հարեանցի հայեացք ձգելով Աստուծոյ թագաւորութեան վրայ այս աշխարհիս մէջ՝ մենք տեսնում ենք միմիայն մեծամեծ պատերազմների, մեծամեծ յաղթութիւններ և մեծամեծ մարդկանց անունների հետ կցուած՝ մեծամեծ և փառաւոր հաշիւներ. բայց մենք մոռանում ենք, թէ բարոյական յաղթանակ տանելու համար՝ յորքան տոկոսնութիւն ու անձնուրացութիւն են հարկաւոր եղել, յորքան ծածուկ աղօթք ու արտասուք և յորքան զրկանք ու զոհողութիւն: Շատ կարելի է դուք կասէք որ՝ անյայտ գործքեր, ինքնուրացութիւն, անձնազոհութիւն, աղօթք և այլն, դրանք անտեսի և աւելորդ բաներ են. այո՛, դրանք աւելորդ բաներ են, թող ասենք, ձեր խօսքը լինի. թող այդ ամենը ոչ այլ ինչ լինի, եթէ ոչ ծովափը ծածկող անտեսանելի աւազի հատիկներ: Առանձին առանձին վերցրած՝ այդ հատիկները հազիւ հազ կարող են կշեռքի թաթը շարժել, բայց միմեանց վրայ դիզուելով, նրանք ալիքների յորձոնները կանգնեցնում են և մրկածուկ ովկիանոսին ասում:

«Աստ կացեա»:

Այսպէս, եղբարք, ես այլ ևս չեմ զօրմանում, երբ պատ-

մուլթեան մէջ տեսնում եմ, որ ամենամեծ մարդիկը նրանք են, որոնք փոքր բաներին աւելի ուշադիր են։ Ո՛չ քաղաքական և զինուորական ասպարէզներում, ո՛չ գեղարուեստներում և գիտութիւններում՝ ձշմարիտ հանճարները երբէք չեն արհամարհիլ աննշան բաները և գրանց իրանց ուշադրութեան տնարժան՝ երբէք չեն համարիլ։ ձշմարիտ է, նրանք — հանճարները այդ աննշան բաների մէջ ամբողջապէս չեն ընկղմուիլ, բայց, այնու ամենայնիւ, նրանք երբէք չեն կարծիլ, որ այդ աննշան բաները իրանք կարող են և զանց առնել։ Ընդհակառակը՝ իրանց արհեստի կամ գիտութեան ամենաչնչին մասերը ուսումնասիրելով՝ իսկական հանճարները սովորել են նրանց իւրեանց կամքին ենթարկել միշտ։ Այս բանի մասին բաւականին օրինակներ կան Աւետարանում։ ով կարող է ժխտել, որ Յիսուս Քրիստոս մի այնպիսի մեծ, փառաւոր և անսովոր վերանորոգութիւն առաջացրեց, որոյ նմանը հազիւ թէ աշխարհս հրեականայել է։ Այսու ամենայնիւ նա մեզ օտարեցրել է թէ՛ բարոյական աշխարհում ինչ արժեք մեղաւոր կնոյ արտասուքները, աղքատ պրիի լուման և մաքսաւորի խոնարհ հառաչանքը։ Բայց այս բոլոր փոքր բաները նրանից առաջ ոչ ոքին չէին հետաքրքրում։ Յիսուս Քրիստոս։ . . . ո՞նց արտասանել այս անունը, առանց յիշելու, մի և նոյն ժամանակ, որ նրա ողջ կեանքը մեր վերջրած բնաբանի — հաւաքաբեկէ՛ք, խորհե՛ք — ամենալաւ բացատրութիւնն է։ Նրանից աւելի ո՞վ հաւատարիմ էր փոքր բաներում։ Ուզո՞ւմ էի իմանալ այն մեծ — եթէ ներելի է այսպէս ասել — գործողութեան գաղտնիքը, որով Քրիստոս յաղթեց աշխարհին։ Դուք նրան տեսնում էք Գալիլիայում այն աննշան, հեզ մարդկանց շուրջը, որոնք նրա առաջին աշակերտները եղան։ Միթէ նա նրանց իւր ուշադրութիւնից բժրձր համարեց, նա իւր գործունէութեան համար միթէ աւելի լայն տուպարէզ գտնելու հետամուտ եղաւ։ Միթէ նա մտածեց, որ Սամարացի կնոջ հոգին անընդունակ է իւր վարդապետութեան բարձրութեանը հասնելու և թէ՛ մեղաւորներին և մաքսաւորներին ուսուցանելը՝ կորած աշխատանք է։ — Ո՛չ, Յիսուս Քրիստոս ամենասիրտը և խոնարհ պարտականութիւններն անգամ

կատարելումը՝ հաւատարիմ էր. հաւատարիմ էր՝ ամէն մի աշակերտի վերաբերութեամբ, մինչեւ անգամ վերաբերութեամբ նորանց, որոնք ամենից անընդունակ էին և դանդաղ ու երերուն հաւատի մէջ. հաւատարիմ էր դէպի ամէն մի իրան որոնող հոգի, ամէն մի վիշտ, որին նա միշտ ընդառաջում էր. Հոգւոյ վերածնելութեան և փրկութեան վերաբերեալ ոչ մի գործ նրա տեսութիւնից չը վրիպեց և անարգուած ու արհամարուած շրջաններում աւելի լոյս և խնամք տարածեց նրա աստուածային իմաստութիւնն ու ողորմութիւնը:

Այսպէս ուրեմն, եղբայրներ, թէ՛ կեանքը և թէ՛ Աւետարանը քարոզում են մեզ հաւատարմութիւն փոքր բաներում: Բայց այս պարզ ակնյայտնի և անհրաժեշտ պարտականութիւնը արդեօք մենք ի՞նչպէս ենք կատարում: Թոյլ տուէք ինձ, եղբայրներ, այստեղ սեպհական վկայութեանը գիմեմ և ինձ պատասխան տուողը՝ թող ձեր խիղճը լինի:

Դուք, զորօրինակ, սիրելի եղբայրներ՝ ձեր հոգու մէջ սրբութեան բարձր գաղափարն ունիք: Աւետարանի բարոյական գեղեցկութիւնը ձեզ գրաւում է և երբ ձեզ կպատմեն բոլորովին Աստուծոյ նուիրուած մի կեանքի պատմութիւն—կեանքի, որ ամէն տեսակ զրկանքների և անարգարութիւնների է ենթարկուած, որ հարկ եղած ժամանակը, մինչև իսկ խաչի վերայ է բարձրացած, այն ժամանակ—վստահաբար կարելի է ասել—ձեր հոգու մէջ մի աղնիւ եռանդ, մի հոգեզմայլ զարմացումն է զարթնում, երբ դուք այդ գաղափարի հետ համեմատում էք ներկայ հասարակութիւնը՝ ձեր բերնից տխուր և վշտալից դատաւիճիւ են դուրս գալիս. դուք դատապարտում էք մեր ժամանակը՝ ցոյց տալով նրա պակասութիւնները և սուղ՝ «բարոյական մաքրութիւնը, խղճի պահանջմանց հնազանդութիւնը մեզ ո՞վ կվերադարձնէ և դրանց իրաւունքները էլ ո՞վ կը պաշտպանէ»: Ձեր հոգու այս վսէմ զգացմունքը՝ եղբայրներ, ես հասկանում եմ և զմայլում նրանով: Տայ Աստուած, որ այդ զգացումը աւելի և աւելի տարածուելով տիրէ մեր բոլորի հոգւոյն: Բայց անմիջապէս ահա մի տուիթ է պատահում, որ ձեր սիրած ու պաշտած որբութեան սոյգ վսեմ

գաղափարի մի մասը՝ գործով ցոյց տաք: Ձեր կեանքում, ասենք, մի յատուկ սովորութիւն կայ փափկասիրութեան և հեշտասիրութեան: Եւ ահա մի յարմար առիթ ձեր ամենօրեայ զուարճութիւնները փոքր ինչ սահմանափակելու: Փամանակիս ապականութիւնը ձեզ զզուեցնում է և դուք ողբում էք այդ ապականութիւնը: Այժմ ձեր սեպհական կեանքում ձեզ թողնելում է զսպել ձեր ցանկութիւնները, թողնել, որ և է վնասակար գրքի ընթերցումը, խոյս տալ, հեռանալ ձեր սիրտը վրդովող այս կամ այն թեթեամիտ ընկերութիւնից: Արդ՝ ի՞նչ էք կարծում. դուք այդ անո՞ւմ էք միթէ: Ո՞ւր է այն մեծահոգի վառվառեցութիւնը, որը փոքր ինչ առաջ, խօսքով արտայայտում էիք, ո՞ւր է բարոյական այն ամբողջութիւնը, որով դուք այնքան հպարտանում էիք, ո՞ւր է այն ազնիւ առաքինասիրութիւնը: Այդ ամենը ես ի զուր եմ պտուռում այն ժամանակ, երբ Գրքով ցոյց տալու հերթը գայ: Եւ այդ գլխաւորապէս այն պատճառաւ որ իմ պահանջած զսոցողութիւնքը, ցոնկութիւնների սահմանափակումը և զրկանքները ձեր աչքում իսկապէս փոքր բաներ են թուում: Երբ ձեզ մեծամեծ զոհողութիւնների, փայլուն գործերի են հրաւիրում, դուք պատրաստ էք. իսկ փոքր բաներում ո՞ւր է արդեօք ձեր հաւատարմութիւնը:

Դուք, եղբայրք իմ, ողորմածութեան մեծ գաղափարն ունիք ձեր հոգու մէջ: Այդ գաղափարը ձեզ աւելի գրաւում և յափշտակում է Աւետարանի մէջ, ուստի և խաչը ձեզ աւելի քարշում և խոնարհեցնում է դէպի ինքը: Յուզմունքից դուք գողում էք տեսնելով բարեգործութեան և սիրոյ այն գործերն, որ Աստուած սպասում է ձեզանից, ձեր համակրանաց մէջ դուք շնորհաւորում էք բոլոր մարդկութիւնը, մանաւանդ նրա աղքատ և զրկուած անդամները. ամէն բանից առաւել դուք ցանկանում էք արդարութեան թագաւորութեան ժամանեւուն: Ազնիւ ցանկութիւն. սո՛ւրբ եռանդ: Տայ Աստուած, որ մեր բոլորիս սրտերին էլ տիրեն դրանք: Բայց ահա մի առիթ ձեզ ոգեւորող ողորմութիւնը Գրքով ցոյց տալու: Ձեր դրան մօտ մի աղքատ է կանգնած, ցնցոտիների մէջ կօլօլուած մի դժբաղտ աղ-

բառ: Աղքատութիւնը այստեղ գաղափարական և բանաստեղծական չէ, այլ իրական, յայտնաբարբառ և գուցէ անարգական. բայց, ինչ էլ որ լինի, աղքատը մի քրիստոնիայ արարած է դարձեալ, որ վշտերի մէջ տառապում է: Նրան բարձրացնելու համար ի՞նչ է հարկաւոր. մի թեթեւ զոհողութիւն: Եթէ ձեր զուարճութիւններից մինը պակասացնէք, եթէ ձեր բնականների շռայլութիւններից մինը վերացնէք, եթէ ձեր կեանքը փոքր ինչ պարզութեան վերածէք և կամ ձեր գութը փոքր ինչ շատացնէք, որով վշտահար սրտերի տառապանքները կմեղմացնէք, կջնջէք նրա յիշողութիւնից տխուր մտքերը և ձեր տառապեալ եղբօրը կըմօտեցնէք ձեզ, իսկ նորա մոլորեալ հոգին՝ Աստուծոյ: Ես ձեզանից աւելի քիչ բան եմ խնդրում: Բաւական է եթէ որ դուք ձեր սովորական կենցաղավարութիւնում փոքր ինչ աւելի ներողամիտ և մեղմ լինիք, փոքր ինչ աւելի անյիշալար լինիք, դատաւետելու դառն զգացմունքը և ամէն մի անմեղ բառի առթիւ ձեր ունեցած անտեղի զգայնութիւնը՝ սանձահարէք ձեր մէջ: Ինչո՞ւ անգործ մընում էք: Ո՞ւր է այն ջերմ համակրութիւնը և ըստ երեւութին, անսահման սէրը, որ բաբախեցնում էր ձեր սիրտը դէպ ի ամբողջ մարդկութիւնը: Ես ձեզ հասկանում եմ, իմ առաջարկած պարտականութիւնները՝ ձեզ համար շատ փոքր են . . . : Նրանք ձեզ ձանձրացնում և յոգնեցնում են. նրանք շատ միտման բաներ են, նրանցում միշտ և այն բանն է: Իսկ դուք ուզում էք ամբողջ մարդկութիւնը սիրել և դրա համար պատրաստ էք միւսը անգամ նահատակուիլ: Հապա մանր բաներում ի՞նչ եղաւ ձեր ոգորմածութիւնը:

Վերջապէս դուք, եղբարք իմ, քրիստոնէական կեանքի բարձր գաղափարը ունիք ձեր հոգու մէջ: Դուք սիրում էք երեւակայութեամբ փոխադրուիլ դէպ ի այն ժամանակը, երբ ամօթիթատրոններում և խարոյկներում, հարուածների տակ հեծելով, քրիստոնեաները յաղթեցին աշխարհիս: Քրիստոնէից այժմեան վիճակը, նրանց վշտերն ու նեղութիւնները ձեր առաջը բերելով՝ դուք ցաւում էք և ասում՝ «Ո՞վ կը վերագարձնէ մեզ քրիստոնէութեան մարտիրոսների նախկին բարի

և երկիւղած կեանքը: Ազնիւ ձգտումն: Տայ Աստուած, որ մենք ամէնքս ունենանք այդ ձգտումը և ամենքիս մէջ թափանցէ սէր և եռանդ դէպ ի Աստուծոյ գործը: Քրիստոնէական ըզոր տալքինութիւնները՝ սրբութիւն, հաւատ, սէր, ինքնուրացութիւն՝ իրանց փառաւոր լուսափայլ կողմն ունին, որ մինչև իսկ ամենաանզգայ մարդկանց շարժում և յաւզում է: Այդ յուզմունքներին անձնատուր լինելը շատ դիւրին է: Բայց երբ հարկը ստիպում է մանր բաներում գործով ցոյց տալ այս մեծ գրկանքները, և այս ժամանակ տեսնելով, որ դրանք իրանց հետ անթիւ զոհողութիւններ են յառաջ բերում—ընդ նմին նոյայտ և լուռ զոհողութիւններն տեսնելով որ հարկ է լինում շատ անախորժ պարտականութիւնների հանդիպել, հնազանդութեան ճշիշ բեռան տակ մոռնել, մարդկային փառքից հրաժարուիլ և իւր վրայ ընդունել—ինչ որ Ս. գիրքը ամենայն ճշտութեամբ անուանում է: Յիսուս Քրիստոսի վերջը—տեսնելով այս ամենը աւելի բարւոք են համարում խոյս տալ այդ պարտականութիւններից: Եւ այսպիսով մանր պարտականութեանց կատարումից խոյս տալով մարդիկ մխիթարւում և իրանց միամտացնում են այնու, թէ իրանք, ի վերայ այս ամենայնի, թափանցել, շարժուել և ոգևորուել են Աւետարանի մէջ յիշուած ամէն մի բարձր և վսեմ բաներով, իսպառ մոռանալով, որ այդ տեսակ շարժումն և ոգևորութիւնը աւելի մեծ պատասխանատուութեան տակ կը ձգէ իրանց, որ վերջին օրը Աստուած չպէտք է հարցնէ թէ մենք զարմացանք արդեօք Աւետարանով, այլ թէ՝ հաւատացի՞նք նրան, խոստովանեցա՞նք նրան և ի փառս նրան կենցաղավարեցա՞նք:

Ինչ մնում է, եղբարք, ցոյց տալ ձեզ թէ այս մանր պարտականութեանց զանց առնելը՝ տրամաբանօրէն, ինչ անխուսափելի հետեանքների է տանում մեզ:

Նախ և առաջ՝ այս բանի անխուսափելի հետեանքը այն կլինի, որ կրօնական կեանքը մեր հոգու մէջ թուլանում և անհետանում է: Որովհետեւ հենց որ մենք մի անգամ ասացինք, թէ մեր ողջ կեանքը մշտական մանր պարտականու-

թիւններէն է կազմուած և ամենայն օր չընդունելով Երանց, իսկական կեանքի համար մենք մեռնում ենք: Մեծամեծ գործերի, հերոսական անձնուրացութիւնների համար շատ քիչ մարդիկ են վերակոչուած: Ընդ նմին մեծ գործերն ու անձնուրացութիւնները շատ հազիւ հազ են վիճակուում մեզ: Մեզանից շատերի կոչումը, հաւանականաբար, համեստ և անշուք է: Ասուած մեզ մանր պարտականութիւնների է հրաւիրում: Ինչ կը լինի մեր վիճակը, եթէ որ արհամարհենք այդ պարտականութիւնները: Մածուկ գործերի և աննշան զոհաբերութիւնների գումարը մի անխղճի ոյժ է կազմում, որ բարեր է ապրում և միշտ, ու աւելի և աւելի, մեզ ամրացնում է: Ընդհակառակը՝ ոչ մի բան այնպէս չէ թուլացնում հոգին, որքան, թէև մանր, բայց յաճախակի կրկնուած խուսափումը մանր պարտականութիւններից: Այս խուսափումները, առանձին առանձին, թէև մի նշանաւոր բան չեն, այնուամենայնիւ, նրանք բարոյական կեանքը տատանեցնում են՝ ամբողջ մասերը բաժանելով այնքան ժամանակ, մինչև մի որ և է գայթակղութեան հարուածների տակ՝ մի օր, յանկարծ, ամբողջ շինութիւնը փուլ կը գայ:

Այս առաջին հետեանքին կը հետևի երկրորդը, որ աւելի խիստ է: Լաւ մոտեցէ՛ք, որ մանր պարտականութիւնները ոտնակոխ առնելով, մենք ջլատում ենք մեր խիղճը, որ կոմաց կամոց կորցնում է իւր զգայնութիւնը դէպ ի ամէն բարի, ազնիւ և վսեմ բան: Եւ այդ մյնջան շուտ՝ որ որ և է ծանր, յանցանք ևս նրան—խղճին—չէ նախազգուշացուցանում: Բայց խղճմտանքը, եղբարք, բոլորովին լուռ չի մնալ. նա ընդդիմադրում է և մեր ամէն սխալի ժամանակ բողբոջում է: Բայց այդ բողբոջը, որ օկզբում շատ զօրեղ է լինում, հեռոգհեռէ թուլանում է: Եւ այն ժամանակ այլ ևս ո՞վ կը լսէ նրա ձայնը: Այս ընթացքով՝ անկատելի կերպով, խաբւում են և, որ ամենից զարհուրելին է, կարծում են, որ խղճի առաջ արդար են: Բայց ուրիշներին խաբել չէ կարելի, եղբարք: Աշխարհս շատ թափանցող այքեր ունի՝ ձեր ծածուկ անկարգութիւնները և ձեր անհետեւողական կեանքը տեսնե-

լու համար: Աշխարհս, որ Աստուածային պատգամները յաճախ զանց է առնում, այնու ամենայնիւ նրանցից շատ բաներ է սպասում: Մարդկային աշխարհը, — թող այս մեզ չզարմացնէ, — երկիւղած ճառերով և արտաքին փայլերով չէ խաբւում: Նա աւելի մեծ յամառութեամբ քան թէ ես, պահանջում է, եղբարք, ձեզանից հաւատարմութիւն մանր պարտականութիւններում: Եւ եթէ չգտաւ ձեր կեանքում, — այն ժամանակ ձեր երկիւղածութիւնը նրա համար կը դառնայ ծնծղայի սոսկ զողանջումը:

Սաստիկ ցանկութեան ձգտումը Դաւթի կործանման պատճառ եղաւ. հասարակ տղախնւոյ հարցմունքը բաւական եղաւ Պետրոսի ուրացմանը. փոքր ինչ ազահոլութիւնը կործանեց Յուդային. Մեծ գայթաղութիւններից չպէտք է շատ վախենալ, նրանք իրանց մեծութեամբն արդէն մեզ նախադգուշացնում և սարսափեցնում են՝ զարթեցնելով մեր մէջ մեր բոլոր ոյժը՝ մեր ներքին դիմադրութիւնը և մեզ յաճախ ազատում են թէ կուզ լով մեզ վրայ ազդած իրանց սարսափովը: Եթէ որ, օրինակի համար, մարդիկ ստիպէին ձեզ ուրանալ Քրիստոսին և նրա գործերը չընդունել, այն ժամանակ դուք սարսափմամբ լիտ կը քաշուէիք այդ մարդկանցից: Բայց ահա մի և նոյն նպատակին հասնում են նրանք ուրիշ ճանապարհով — քնքոյշ վայրկայանքներով, ձեր տաղանդ ու յատկութիւնները գովելով՝ քարոզելով ձեզ, որ եթէ դուք մեկուսանաք մնայլ երկիւղածութեան մէջ, կը կորցնէք ձեր ոյժը և ազդեցութիւնը, դուք կսպանէք ձեր տաղանդը և այլն: Եւ եթէ դուք զիջաք այս հրապոյրներին, այն ժամանակ կըտիրեն և կիշխեն ձեզ վերայ այնքան, մինչև որ, մի օր վերջապէս, դուք կըսկսէք ամուսնիլ այն խաչից, որոյ պատուանդանի տակ ծնաք, սնաք և յոյս ունէիք, նաև մեռնելու: Եթէ որ աշխարհս կամ մարդիկ ձեզ հարկադրէին ձեր հարազատներից կամ բարեկամներից մէկին ատել, — դուք իսկոյն ձեր բոլոր վսեմութեամբ կըբողբէիք և կընդիմադրէիք, բայց ձեր մէջ նախանձի փոքրիկ զգացումներ կարծարծեն, որոնցից դուք երկիւղ չունիք: Եւ եթէ դուք սնուցիք ձեր մէջ նախանձի այդ փոքրիկ զգացումները՝ ձեր

սիրտը՝ որ այժմ այնքան բարի է և սիրող, կամաց կամաց կըսկսի դառն խորհրդաճուժիւնների ասպարէզ դառնալ, մի ամբողջ գոտիք՝ վատթար ցանկութեանց և զգուհի կրից, — եթէ որ աշխարհս ձեզ խորհուրդ տար՝ ամօթալի սարկովիեան մատնելով ձեր հոգին, ծառայել միմիայն մարմնայն, — իսկոյն դուք կըբողոքէիք ձեր մէջ եղած բոլոր ազնիւ ձգտումներով:

Բայց ձեր սրտի մէջ զգայական ձգտումներով մուտ կըգործէ գաղտնի յուզմունքը: Եւ եթէ դուք զիջաք, — այն ժամանակ շղթայից պոկ եկած ցանկութիւնները իրանց բոլոր կարողութեամբ, և ըստ հաճոյս իրանց, ձեզ կըմղեն կըսանեն — մինչև այն օրը, երբ դուք յանկարծ սթափելիս՝ կըտեսնէք որ արդէն անելանելի անդնդի մէջն էք գտնվում: Հարցրէք այն անկեալ էակներին, նրանց, որոյ մօտենալու միտքն անգամ ձեզ սարսափեցնում է, որոնք աշխարհի ատեցողութեան և նախատանքին են ենթակայ միշտ: Հարցրէք նրանց իրանց տխուր պատմութեան գաղտնիքը: Արդեօք նրանց բոլորի անկումն ևս մեծամեծ յանցանքներինց յառաջացաւ: — Գրեթէ ոչ դիմել: Միմիայն աննշան հարուածը կամ փոքրիկ գայթակղութիւնը հարկադրեց նրանց առաջին քայլն անել դէպ ի խորխորատը: «Այս բանը վնաս չունի» ասացին նրանք. բայց հենց այդ բանը կործանեց նրանց:

Լուսադէմին ճանապարհ ընկնող նաւի վերայնայեցէք, մեզմ հոգմը պարզում է նրա առաքառոտները, և նաւը հանդիսաւոր կերպով, դէպ ի ծովն է ընթանում: Բոլորի աչքերը նրան ճանապարհ են ձգում, նրա ուղի ընկնելը ուրախութեան աղաղակներով է լինում: Բայց արդեօք որքան յուսահատ հայեացքով մարդիկ նրան ճանապարհ կըձգէին, եթէ իմանային, որ նրա ամբարի տակ մի աննշան ճեղք կայ, որտեղից ջուրը, անդադար և կաթ առ կաթ, ներս է մտնում: Եթէ դուք գիտենայիք, որ մինչդեռ տախտակամածի վրայ փայլում է արեւը և նաւի կողմը ամէն բան և ամէն ոք ուրախ է, միւս կողմից մտհոգ, աննկատելի կերպով, նսյում է այդ ուրախութիւններին և պատրաստվում է իւր որսը կուլ տալ: Եթէ գիտենայիք, որ ովկիանոսի խորքերում, վրայ հասնող գիշերուայ լուսութեան

մէջ նաւը շուռ պիտի գայ և ընկղմուի:—Ո՛հ, որքան քրիստոնեաների կեանք ենք տեսել, որոնք ամենայն ուրախութեամբ և վստահութեամբ աշխարհիս ովկիանոսին են մօտենում: Եկեղեցին մօտիկ է անում նրանց վրայ և ուրախանում, տեսնելով նրանց փայլուն նպատակը: Սակայն աշխարհիս զանազան գայթակղութիւնները՝ իրանց հաճոյքներով ու հրապոյրներով, նրանց հոգու մէջ ծածկաբար աշխարհային այլ և այլ մոլորութիւններ են տերմանում և աճեցնում: Եւ այն ժամանակ ամէն բան կորած է: Եւ ուրիշ ոչինչ չէ մնում, եթէ ոչ նոյն կորած հոգիների տխուր և սիրտ կեղեքող յիշատակը:—Հոգիների, որոնց աշխարհը խելց և որոց մեզ հետ երկնքի հրեշտակներն ևս ուրբում են, Եղբայրք, երկնքնք և հեռու մնանք մանր փորձութիւններից:

Հաւատարիմ եղիք, կրկնում եմ ես ձեզ, թէ կուզ ամենափոքր առիթներում, երբ Աստուած ձեզ իրան ծառայութեան է հրաւիրում: Հաւատարիմ եղիք որովհետեւ, ինչպէս փոքր ինչ առաջ ես ձեզ ցոյց տուի, ոչինչ բան այնպէս չէ ամրացնում մարդուն, որքան մշտական հաւատարմութիւնը:

Այնպէս եղէք, որ կարողանաք աւելի հաստատուն հաւատք ձեռք բերել, աւելի խոր կտրեկցութիւն և ողորմածութիւն: Այնպէս եղէք, և յանուն ճշմարտութեան, սրբութեան, և արդարութեան ձեր բերած ամէն միզոհի ժամանակ դուք կըզգաք, որ այդ զոհաբերութիւնը՝ մի մխիթարութիւն է, — մխիթարութիւն ո՛չ թէ վերացական, այլ իրական, գործնական: Եւ յիշուի, ո՞վ չէ տեսնում, որ Աստուծոյ ծառայութեան գործումը՝ ամէն մի ընդունակութիւն, որ նոյն Աստուծուն է մեզ պարգեւած, գործօն վարժութեամբ զարգանում, կատարելագործվում է, իսկ անգործունէութեամբ, ընդհատակը, թուլանում, բթանում: Առաջին նուագներում ինքնապիտութեամբ միայն գոհ և երջանիկ սիրտը, վերջերում, Աւետարանի զեկաւարտութեամբ, այլ ևս դրանով չէ բաւականանում, այլ սկսում է ինքնուրացութիւն և սէր որոնել: Եւ այսպիսով կը կատարուի Աւետարանի այն խորհմաստ խօսքը թէ՛ «Առնայել որ ունիցի՝ ասցի եւ յաւելցի»: (Մատթ. Իե. 29): Եւ քրիստոնէի

այս հաւատարմութիւնը, Աստուծոյ օրհնութեամբ, կրբերէ ժամանակին իւր պտուղները և նրանց փխարէն կը վարձաւորէ:

Հաւատարիմ եղէք, ասում եմ ես ձեզ վերջապէս, և այն փոքր կարողութիւնում, որ Աստուած ձեզ պարգեւել է, Անտարակոյս հաւատարմութիւնը այս դէպքում բաւականին դժուար է և Յիսուս այդ ընդունում է՝ քանքարների առակում մատնացոյց լինելով այն ծառայի վրայ, որ իւր սիրովից մի քանքար միայն ընդունելով, չշահեց այն, և արժանացու պատժի և յանդիմանութեան: Զարհուրելի կերպարանք ունի նոյնպէս և այն աշխատութեան փորձութիւնը, որոյ (աղքատութեան) մէջ Աւետարանը ցոյց է տալիս թէ՛ օրհնեալ և թէ՛ վտանգալից կողմեր: Ա՛հ, դուք, որոց Աստուած զրկել է այս աշխարհիս բարիքներիցը և որոնք շատ անգամ տրտմութեամբ և նախանձով ասում էիք, որ եթէ այդ բարիքները դուք ինքեանքդ ունենայիք, հազար անգամ լաւ կերպով կը գործադրէիք քան թէ նրանց ունեցողները, — զգուշացէ՛ք այդ բանից: մի գուցէ ձեր եղբարց վրայ բարկութեան և նախատանաց խօսքեր նետելով, ինքեանքդ մոռանաք անել այն, ինչ որ ձեզ բաժին է ընկած: Զգոյշ եղէ՛ք, մի գուցէ կուրանաք ապերախտութեամբ կամ գուցէ արհամարհէ՛ք Աստուծոյ ձեզ պարգեւածը, այն Աստուծոյ՝ որ ասաց, « որ արքայացէ Բաբելոնի վրայ, ու ինչպէս եղանակ էր » (Մատթ. Ժ. 42): 'Իսկ, որ մինչ օրս տխրութեամբ և հեծութեամբ ողբում էիք ձեր վիճակը, — դուք արհամարհեցիք այն ամէն բարիքները, որոնցմով կարող էիք գործել: Եւ այսպիսով դուք ուրացաք այն մեծ խորհուրդը, առ որ կոչում է ձեզ Աստուած: Ժամանակ է այդ բանը յիշել այժմ: Անմահութեան ժամ անգորդների, Աստուծոյ պաշտօնեաների, արթնացէ՛ք, և հեղութեամբ ու խոնարհութեամբ ցոյց տուէ՛ք մեզ, որ սիրող սիրտը կարող է բարիք գործել թէ՛ կուղ լոկ իւր սէրը ապացուցանելու համար: Յոյց տուէ՛ք այն պործերը, որ սիրող սիրտը կարող է կատարել: Ձեր օրինակով ապացուցէ՛ք, որ « յեպէն + եղեյն առաջին » (Ղուկ. ԺԳ. 30) և թէ « Զիմարո աշխարհիս ընտելեաց Աստուած »՝ ղի յաճիլ արտայել ղի-

Տասրուհի, և զպէարս աշխարհէն ընդրեաց Աստուած: զի յաճեի ա-
րապէ զհզարս . . (Ա. Կորնթ. Ա. 27): Արիացէք, արդարութեան
թագաւորութիւնը մերձենում է: Կուգայ ժամանակ, իր ինք-
նասիրութեան և գոռոզութեան արուեստական ըողոր փայլն
ու լեծութիւնը՝ հրապարակ կելնէ իւր զգուելի մերկու-
թեամբ և երբ հեզ, խոնարհ և անյայտ կեանքը, որ Աստուծոյ
փառացն էր նուիրուած՝ կրփաւաւորուի աշխարհումս յաւի-
տեանական փոռքով: Երանի նրանց, որոնք այդ օրը կարժանա-
նան լսելու . . Ազնի- ծառայ՝ Բարի և հառապարիժ, հոգի յոբանայ-
նիս արեւուն . . (Մատթ. Ի. 21): Ո՛վ Տէր, տուր, որ մենք
ամենքս էլ այդ խօսքերը լսելու արժանացողներիցը լինինք:
ամենքս էլ, այս օրուանից սկսեալ, մեր արիութիւնը Քոզոհու-
թեանդ մէջ, իսկ մեր վարձը՝ Քո սիրոյդ մէջ որոնենք. ամէն:

(Բեբեկ)

Թարգմ. Ե. ք. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Արարատի անցեալ համարում յայտնեցինք այն
ուրախութիւնն, որ զգաց թէ բարձրագոյն հո-
գեւոր իշխանութիւնը, թէ Ա. Աթոռոյս միաբա-
նութիւնն և թէ նոյն իսկ ժողովուրդը, Ղեմա-
րանի պատուելի տեսուչ Արշակ Նահապետեանի
(այժմ հայր Նահապետ) և երեք ուսումնաւարտ-
ների կրօնաւորական դասը մտնելու առթիւ. այդ
ուրախութիւնը հասկանալի է և բնական, քանի
որ վաղուց արդէն զգալի է եղած ուսումնական
և գիտնական եկեղեցականաց կարօտութիւնն և
օր աւուր վերայ աւելի զգալի է դառնում, ժո-
ղովրդեան կրօնական զգացմանց պակասելովն և